

Universitäts- und Landesbibliothek Bonn

**Hatowktir bank' ew č'ark' i matenagrowt'eanc' naxneac' i
verac' žamasac'owt'eanc' ew S. Pataragin**

Sargisean, Barseg

Venetik, 1910

urn:nbn:de:hbz:5:1-74135


Goussen
4°


5545

~~Goussen 3545~~

~~40~~

Goussen 4' 3545





Abseuder. F. Basilius de Saughissean

ՀԱՏՈՒԿՏԻՐ

ԲԱՆՔ ԵՒ ՃԱՌՔ

Ի

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՆԵԱՑ

Ի ՎԵՐԱՑ

ԺԱՄԱՍԱՑՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1910

3545

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

g 3545

ՀԱՍՏԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՆԱԽՆԵՍ

ՀԱՏՈՒԿՏԻՐ ԲԱՆՔ ԵՒ ՃԱՌՔ

Ի ՄԱՏԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՆԱԽՆԵՍ



ՀԱՍՏԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՅ

1910

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO

1900

LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO



THE UNIVERSITY OF CHICAGO

1900

ՀԱՏՈՒԿՏԻՐ
ԲԱՆՔ ԵՒ ՃԱՌՔ

Ի

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՆԵԱՑ

Ի ՎԵՐԱՑ

ԺԱՄԱՍԱՑՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1910

3545

1850

W. H. & C. O. S.

1

W. H. & C. O. S.

W. H. & C. O. S.

1850

W. H. & C. O. S.

W. H. & C. O. S.

W. H. & C. O. S.



W. H. & C. O. S.

1850

Ի

ՅԻՍՆԵՐԵԱԿ ՅՈՒՆԷԼԻՆԻ

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ո Ի Թ Ե Ա Ն

Ե Ի

ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Ս Ր Բ Ո Յ Ա Ն Մ Ա Հ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Ն

ՄԱՏՈՒՅԵԼՈՅ ԱՌ ՏԷՐ

Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՊԱՇՏՕՆԷԷ ՍՐԲՈՅ ՍԵՂԱՆՈՅՆ

Հ. ԴԱԻԻԹ Վ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

Ա. Թ. Ո. Ռ. Ա. Կ. Ա. Լ. Ի

Մ Ի Ի Թ Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ն Ա Յ

Ս Ր Բ Ո Յ Ն Գ Ա Ջ Ա Ր Ո Ւ

Հ Ո Գ Ե Կ Ի Յ Ք Ն Ո Ր Ի Ն Ե Ղ Բ Ա Ր Ք

ԲԵՐԿՐԱՋՈՒԱՐԹ ՈԳԻՈՎ

ԵՒ ՍՐՏԱԳԻՆ ՄԱՂԹԱՆՕՔ ԵՐՋԱՆԿԱԲԱՍՏ ԵՐԿԱՅՆ ԱՎՈՒՐՅ

ՋՆՈՒԻՐԱԿԱՆՍ ՉԱՅՍՈՍԻԿ ՆՇԻԱՐՍ ԵՐԿՈՒՍ

Ի Բ Բ Ի Ճ Ա Շ Ա Կ Տ Պ Ա Գ Ր Ե Լ Ի Ը Ն Դ Ա Ր Չ Ա Կ Հ Ա Տ Ո Ր Ո Յ

ԸՆԾԱՅԵՆ, ՉՕՆԵՆ, ՆՈՒԻՐԵՆ



SPENCER'S PATENT

FOR WRITING

AND DRAWING

IN PENCIL OR INK

ON ANY KIND OF PAPER

OR LEATHER

OR OTHER MATERIAL

IN THE WORLD

MADE IN GREAT BRITAIN

BY THE PATENT

WRITING

AND DRAWING

IN PENCIL

OR INK ON ANY KIND OF PAPER

OR LEATHER OR OTHER MATERIAL

IN THE WORLD

MADE IN GREAT BRITAIN

BY THE PATENT

WRITING

AND DRAWING

IN PENCIL

OR INK ON ANY KIND OF PAPER

OR LEATHER OR OTHER MATERIAL

IN THE WORLD



ՄՈՎՍԵՍԻ ՔԵՐԹՈՂԱՀՕՐՆ

ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ Ի ՇՆՈՐՀԱՅ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

Շարադրութիւն շարամանու Հոգեւոր Երգարանիս ըստ երաժշտական չափոց շտամբաձայնութեան ստեղնաչափութեան ութամասնեայ պատկանաւոր ձայնից պատճառք

Եւ արդ, քանզի նախկին հնչեաց բարբառն աստուածային՝ թէ Ո՛ւր ես Ադամ. և երկրորդ՝ թէ Ո՛ւր է Աբէլ եղբայր քո. և երրորդ՝ թէ Ո՛ւր է Սառա կին քո. արդ այս ամենայն ձայնքս՝ հարազատք են առաջին ձայնին. որոց՝ սրբոց Սրովբէիցն հնչումն ի յերկրիս՝ երկրորդ յօրինեցան՝ փառաբանութեան երգք: Քանզի առաջին փառաւորչացն՝ յառաջին հրաշափառական ձայնիւ հնչեաց բարբառն՝ յասելն, եթէ Փանօք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն: Իսկ կողմ նորին՝ զողորական զմաղթանս ունի, և զերկրածգական զաղօթան՝ երգ Մովսէսեան յերկրորդում խորանին վկայութեան, ըստ որում համաձայնի օրհնեբգութիւն Մարիամայ՝ քեռն Ահարովի՝ յերգելն թէ Օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ:

Իսկ երկրորդ ձայնն՝ զխմբական աղաչողութիւն ունի, զառ ի վըտանգից ասպրեցելոցն, և զբոցախմբեցելոց հրախաղաց զերից մանկանցն զօրհնեբգութեան երգան ի մէջ հնոցին, յաղագս երկուց փրկութեան, մարմնոյ ասեմ և հոգւոյ. որպէս ասի յերկրորդ ձայնիւ երգեալ՝ յեր-

կրորդ ժամու աւուրն: Իսկ կողման նորին՝ ողբերգական ձայնն. սովաւ յօրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պահս քառասնորդացն և Քրիստոսի չարչարանաց աւուրն. ըստ երկրորդի զՂՃման ապաշխարողացն, զառաջին զբարեգարդութիւնն ոչ ունելով:

Իսկ երրորդ ձայն՝ զիգական աղաչողութիւնն ունի. սովաւ յօրինեցան քարոզութիւնք տուրնջեան և զիշերոյ, ըստ առ ի յերրորդական տուողութենէն, ըստ երկց ամանակաց պիտոյից, ըստ մարմնոյ և շնչոյ և հոգւոյ: Իսկ կողմն նորին՝ բերկրալից ձայն, որ և վառ իսկ կոչի, այսինքն է՝ խիստ ձայն: Սովաւ յօրինեցան Սաղմոսք աւուրն Արմաւենեաց՝ ի մտանելն Յիսուսի յԵրուսաղէմ. որոց և համաձայնի օրհներգութիւն տղայոցն՝ յասելն եթէ Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Իսկ չորրորդ ձայն՝ զընդհանուր զքարոզութիւնն յայտնէ ըստ չորս անգիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս և ըստ չորից բաղկացութեան մարդոյն: Իսկ կողմ նորին՝ ուրախալից ձայն, սովաւ շարադասեցան ստողորգիականք Սաղմոսք ի սուրբ Պասեքին, ի Յարութեանն Քրիստոսի, ի մի պարունակութիւն երկնայնոցն և երկրաւորացս, ըստ առաջին բաղկացութեանն:

Արդ, Աստուած անեղձ անուն արարչական ասի, և Տէր դատողական, որ զիմանալի աշխարհ բաղկացոյց, տաան թուօք օրհնաբանիչս իւր կարապետեաց իմանալի խորանին. յորոց մինն ստորանգեալ՝ յօրհնելոյն զԱստուած՝ անարժան գտաւ: Իսկ ինն դասուցն անդադար ի Հոգւոյն Սրբոյ կան ի փառաբանութիւն իւրեանց Արարչին: Զոր և ի նմին Հոգւոյ ուսեալ մարգարէիցն՝ ուսուցին և ծանուցին որդւոց մարդկան զերաժշտական երգս օրհնութեան: Իսկ զգալի աշխարհս՝ տաան աստիճանօք պատուեալ, զոր ի զանազան ժամանակս ուսոյց Հոգին Սուրբ՝ տաանաղեաւ սաղմոսարանաւ սաղմոսել Տեառն:

Իսկ յապառնի ժամանակին՝ յառաջին ձայնիւ հնչեցեալ լինի փողն Գարբիէլեան, և գերեզմանք բանան և մեռեալք յառնեն: Երկրորդ ձայնիւ՝ լսի բարբառ՝ թէ Փեսայ գայ, արի՛ք ելէ՛ք ընդառաջ նորա: Երրորդ ձայնիւ՝ մարգարէքն վառին որպէս սպառազէնս առաջի նորա. և կողմն արդարոցն վերաբերի՝ հանապազ ընդ Տեառն լինելով: Զորրորդ ձայնիւ՝ կարգի ատեանն ահագին, և նստի դատաւորն յաթոռն՝ դատել զաշխարհս արդարութեամբ:

Իսկ կողմն առաջին՝ լալումն և կոծումն մեղաւորաց ի դժոխս: Իսկ երկրորդ կողմն՝ զեա հրոյ յորդեալ ելանէ առաջի նորա: Իսկ երրորդ կողմն՝ նովա լսի բարբառ զիմադարձաց և անհաւատիցն՝ եթէ Եր-

թայր, անիծեալք, ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալն է սատա-
նայի և հրեշտակաց նորա: Իսկ չորրորդի կողմն՝ ուրախալից ձայն,
նովաւ կոչին արդարքն՝ եթէ Եկայր օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ր
զարքայութիւնն՝ պատրաստեալ ձեզ ի սկզբանէ աշխարհի:

Իսկ երկրորդի ստեղն, զորս գտեալ հրոյն՝ ճարակ և կերակուր իւր
առնէ զամենեսեան: Իսկ վերջին ստեղն՝ պատրաստէ սիրելեաց իւրոց
բաժակ փրկութեան և անմահութեան յարքայութեանն երկնից:

Այս է պատճառք ձայնից երաժշտականաց:

Եւ եթէ ընդէ՛ր ութ կանոնօք կարգեալ են Սաղմոսքն Գաւթի, որով
հանապազ կատարեմք զպաշտամունս եկեղեցւոյ, ինձ այսպէս թուի՝ թէ
եօթն կանոնն՝ ըստ եօթն դարուն, իսկ ութն՝ ըստ ութ դարուն կար-
գեալն է. զոր և իմաստունն Սողովմոն ի զգօնութեան խրատուն տա-
րացոյց տայ՝ յասելն՝ եթէ Տո՛ւր բաժինս եւթանց, այլ և ութից. և
դարձեալ ի Սաղմոսն Գաւթի՝ յասելն՝ եթէ Սաղմոս վասն ութերորդին:

Արդ, որպէս վերագոյն ասացարք՝ եթէ եւթն կանոն յաղագս եւթն
դարուն, իսկ ութերորդ՝ ըստ ութ դարուն խորհուրդ բերէ յինքեան,
զոր և ի վերայ դարձի գերութեանն կարգեալ է ի Բարեկովնէ յԵրու-
սաղէմ. իսկ ըստ իմանալի տեսութեանն՝ յերկրէ յերկինս և յերկիր
աւետեաց նախաշաւիղ ի վերելք: Վասն զի օրինակ էր նոցայն՝ մերոցս,
Երուսաղէմն՝ դրախտին, Նարուզողոնոսոր՝ սատանայի, Բարեկացիքն՝
դիւաց, երեք մանկունքն՝ մարդկային բնութեանս, հնոցն հրոյն՝ հան-
դերձեալ հրոյն: Իսկ զերգս երից մանկանցն հանապազ առաւօտին եր-
գել յեկեղեցւոջ, զի որպէս նորա գերեալք ի բարեկոնական ի բոնա-
ւորէն ի հնոցն անկանէին, նոյնպէս և մեր ի մէջ հնոցի կենցաղոյս՝
գերեալ յաներեւոյթ բոնաւորէն, և ըմբռնեալք պէսպէս ախտիւք և
լուցկիք եղեալ յաւիտենական հրոյն: Աստանօր զոգցես իմն հրեշտա-
կ(ակ)ան ազգմամբ ի թառամեցուցանող քնոյն զարթուցեալք աւուր ա-
ւուր ընդ առաւօտսն զերգս երից մանկանցն ի բերան առեալ՝ ասեմք
եթէ Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, օրհնեալ և փառաւորեալ
է անուն քո յաւիտեան: Եւ որպէս և նորա ի փրկութիւն անձանց իւ-
րեանց՝ առ իւրեանց փրկիչն մատուցեալ, և որպէս առ երկինս ի հնո-
ցէն ի վեր գոչէին, յորդորելով զամենայն արարածս ի փառարանու-
թիւն Աստուծոյ. ըստ նմին օրինակի և մեր՝ իբրեւ անդամք մարմնոյ
նորա և յոսկերաց նորա՝ ի վերայ մեր և ի մեզ բերելով զգլուխն՝
վերագոչեմք աղաղակելով յընդհանուր տեսակս արարածոց՝ եթէ Օր-
հնեցէ՛ք ամենայն գործք Տեսան զՏէր: Իբրեւ զի ազատեալք մեր ի

մեղաց և ազատութեանն մերոյ հաղորդը լեալը ամենայն բնութիւնը արարածոց, հարկաւորին ամենայն իրօք և նոքա ընդ մեզ օրհնել և փառաւորել զԱստուած, զայն՝ որ ազատէն զամենեսեան:


Բայց պարտ է նախկին ապաշխարութեամբն ի մեղացն արդարաւնալ, և ապա հրաման տալ արարածոցն ի փառաբանութիւն Աստուծոյ: Նախ ասել՝ եթէ Մեղաք անօրինեցաք, յանցեաք, և ապա համարձակել և ասել՝ եթէ Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէր. նախկին ասել՝ եթէ Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում զթութեան քում քուեա՛ զանօրէնութիւնս իմ. առաւել լուս՛ զիս, յանօրէնութենէ մեղաց իմոց սուրբ արա զիս, և ապա համարձակել և ասել. Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից, օրհնեցէ՛ք զնա ի բարձանց. օրհնեցէ՛ք զՏէր հրեշտակք նորա, օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք նորա, և յետ այնորիկ բարձրանալ քան զզգալի արարածս՝ յիմանալի բնութիւնսն, և ընդ անմարմնոցն զօրացն գոչել, եթէ Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն: Եւ այնպէս միաբանեալ ընդ վերնոցն՝ գեղեցիկ հակառակութեամբ՝ նախ զսրովբէիցն զհնչումն երգեն զերեքկին սրբասացութիւնսն, և ապա զմանկունս եկեղեցւոյ յորդորելով՝ համաձայնել ընդ անմարմնական բնութիւնսն, յասելն՝ եթէ Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեցէ՛ք զանուն Տեառն, որ զթացաւ առ աղբատ և տառապեալ բնութիւնսն յարուցանելով յերկրէ և ի մեղաց և բնակեցուցանելով ի բարձունս յանմարմնական բնութիւնսն, փառաբանիչս ամենասուրբ Երրորդութեանն. նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:





ՍՐԲՈՅ ՀԱՒԻՆ ՎԱՍԻԼԻՈՒ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ



Ե կ ե Ղ ե Ց ի իցէ տաճար Աստուծոյ, մեհեան սուրբ, տուն աղօթից, ժողովարան ժողովրդեան, մարմին Քրիստոսի, անուն նորա հարսն Քրիստոսի, ջրով մկրտութեան նորա մաքրեալ և արեամբ նորա սրբեալ և հարսնաբար զարդարեալ և օծմամբ Հոգւոյն Սրբոյ կնքեալ. ըստ մարգարէական բանին որ ասէ, եթէ Միտն թափեալ է անուն քո և ի բուրումն մեռոնի քո ընթացայց, զի որպէս իւզն որ իջանէր ի գլուխն և ի մորուն Ահարովն:

Եկեղեցի իցէ երկրաւոր երկին, յորում երկնաւորն Աստուած բնակի, և գնասցէ օրինակելով զխաչելութիւնն և զթաղումն և զյարութիւնն Քրիստոսի, փառաւորեալ առաւել քան զխորանն վկայութեան Մովսէսի, յորում քաւարանն ի սրբութիւն սրբոց, ի նահապետն նախ տպաւորեալ, ի մարգարէսն նախ քարոզեալ, յառաքեալսն հիմնեցեալ, ի մարտիրոսն կատարեալ և ի քահանայապետն զարդարեալ:

Եկեղեցի իցէ ըստ Բեթղաճէմի այրին յորում ծնաւ Քրիստոս և ըստ այրոյ յորում թաղեցաւ, որպէս ասէ Աւետարանիչն, թէ անդ էր այր տաշեալ ի վիմէ յորում եղին զՅիսուս:

Սուրբ Սեղանն իցէ՝ յորում եղաւ ի թաղումն Քրիստոս, յորում առջի դնի ճշմարիտ և երկնաւոր հացն խորհրդական և անարին պատարագն, կենդանի գոհեալ զմարմին իւր և զարին իւր ի կերակուր յաւիտենական կենացն: Իցէ սա և աթոռ Աստուծոյ, յորում հանգեալ Աստուած որ ի վերայ քերովբէիցն նստէր, յորում սեղանոյ և ի խորհրդական իւր ընթրիսն ի մէջ առաքելոցն իւրոց նստեալ՝ առեալ հաց

և զինի՝ ասէ նոցա. Առէք կերայք և արբէք ի սմանէ, զի այս է մարմին իմ և արիւն, և նախանշանեցաւ իսկ յաւետենական սեղանն՝ յորում էր մանանայն, որ իցէ Քրիստոս որ էջն յերկնից:

Տապանակն իցէ փոխանակ տեղւոյն՝ յորում խաչեցաւ Քրիստոս, քանզի մօտ էր տեղին և գահոյս յորում խաչեցաւ Քրիստոս. այլ վասն համառօտ բերելոյ զխաչելութիւնն և զթաղումն և զյարութիւնն Քրիստոսի, յԱղուհացի կարգեցաւ: Իցէ և ըստ տապանակի ուխտին Տեառն, յորում ասի սրբութիւն սրբոցն և սրբութիւնն իւր, յորում հրամայեաց Աստուած լինել երկուս քերովքէս յերկոսեան կողմանս թեւածու:

Իսկ մատուցարանն իցէ ըստ սուրբ գերեզմանին Քրիստոսի, յորում պատարագ զանձն իւր մատոյց Աստուծոյ և Հօր՝ ի ձեռն նշխարի մարմնոյ իւրոյ, իրբեւ գառն զոհեալ և որպէս քահանայապետ և որդի մարդոյ մատեալ և մատուցեալ ի խոհրդական և յանարին պատարագ, և ի բանաւոր պաշտօնս հաւատացելոց քահանայազէն եղեալ: Ի ձեռն որոյ հաղորդս եղաք կենացն յաւիտենական և անմահին. զոր և գառն՝ Մովսէս նախանշանակեաց ընդ երեկս յէգիպտոս, և արեամբ նորա զսատակիչ հրեշտակն դարձոյց ի մահացուցանելոյ զժողովուրդն: Քանզի ընդ երեկս նշանակէր թէ առ երեկս զենաւ ճշմարիտ գառն՝ որ եբարձ զմեղս աշխարհի ի խաչին՝ Քրիստոս, և զատիկ մեր յաղագս մեր զենաւ Քրիստոս:

Մատուցանէ և ասէ. Ըստ երկնաւոր և իմանալի մատուցարանին, յորում փոխանակ տպաւորեսցեն զիմանալի և զպաշտօնական քահանայապետութիւնս զաննիւթ և զվերին զօրութեանցն, երկրաւոր և նիւթական քահանայք մերձ կալով և պաշտելով Տեառն հանապագ. որպէս զի և այսպիսեացս պարտ է լինել իրբեւ հուր կիզօղ, ըստ երկնաւորաց հետեւմանն. և զերկրաւորաց կարգադրութիւնս Որդին Աստուծոյ և դատաւորն ամենայնի օրինադրեաց:

Վէմ իցէ գահոյս՝ տեղի և աթոռ, յորում ամենաթագաւորն Քրիստոս նստիցէ հանդերձ առաքելովքն իւրովք. որպէս ասաց առ նոսա թէ Նստջիբ յերկոտասան աթոռս դատել զխարայէլ. ցուցանելով նոցա և զերկրորդ զալուստն, յորում զալոց է ի դատել զաշխարհս, որպէս ասէ Մարգարէն թէ Անդ նստան աթոռք ի դատաստանի ի տան Դաւթի:

Ջարդք իցէ ըստ օրինական և սուրբ զարդին, յայտնելով զխաչեցելոյն Քրիստոսի Աստուծոյ զզրոշմն՝ ի ձեռն խաչին. զարդարեալ բեմս իցեն, զաղօթիցն տեղին յայտ առնելով, որով նշանէ արտաքոյ զմուտ ժողովրդեան. իսկ ի ներքոյ զսրբութիւն սրբոցն և միայն քահանայիցն գոլով անցանելի:

Ամբիոն իցէ՛ յայտ առնելով զձեւ վիմի Ս. Գերեզմանի, զոր հրեշտակն թաւալեցուցեալ ի դրացն, նստէր ի վերայ նորա մերձ դրան գերեզմանին, վերագոչելով զյարութիւն Տեառն՝ Իւղարերիցն: Իցէ և ըստ Մարգարէին որ ասէ, ի վերայ լերինն դաշտականի ամբարձէք զնշան, եւ որ աւետարանեսդ և բարձրացո զձայն քո. քանզի լեառն իցէ ի տեղուջ դաշտականի և տափարակի եղեալ:

Իսկ ընդ արեւելս աղօթելն, աւանդութիւն իցէ որպէս և այլսն ի սրբոց Առաքելոցն: Եւ իցէ սա վասն իմանալի արեգականն արդարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ յերկրի յայտնեալ: Ի կողմ արեւելից զգալի արեգականն և ըստ Մարգարէին որ ասէ թէ Անուն նորա արեւելք. և դարձեալ թէ Երկիր պագէք Տեառն որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս, և Երկիր պագանեմք ի տեղուջ ուր կացին ոտք նորա: Եւ դարձեալ թէ կացցեն ոտք նորա ի վերայ լերինն Չիթենեաց ընդ արեւելս: Զայսոսիկ ասացին մարգարէքն. և վասն ակն ունելոյ մեզ դարձեալ զոր յՆդեմ դրախտն ընդ արեւելս վայելեալ, և մնալով արեւելից լուսափայլութեան երկրորդ գալստեամբն Քրիստոսի:

Իսկ ոչ խոնարհեցուցանել ծունր յաւուր յարութեան ի կիրակէի՛ նշան իցէ յանկմանէ վերականգնելոյ մերոյ ի ձեռն սուրբ յարութեանն Քրիստոսի: Եւ դարձեալ ի զատկէն մինչեւ ի սուրբ պենտակոստն՝ ոչ խոնարհեցուցանել զծունկս՝ ցուցանէ զեօթն աւուրսն զկնի սուրբ զատկին, եօթն եօթնեակս կրկնեալ, որ է եօթն եօթն, քառասուն և ինն, և կիրակին՝ յիսուն:

Իսկ որ ի քահանային եղեալ իցէ կրկին պսակ ի հերաց նշանակելոյն, նշանակէ զՊետրոսի զլիաւոր առաքելոյն պատուական գագաթն զոր ի Տեառնէ և ի վարդապետին քարոզութիւնն առաքեալ և զլուխ հարթեալ յանհաւատիցն բանին, որպէս թէ խաղ լինելով ի նոցանէն: Իսկ զսա վարդապետն Քրիստոս օրհնեաց և արար զանպատուութիւնն պատիւ և զանարգանսն ի փառս, և եդ ի գլուխ նորա պսակ, ոչ ի քարանց պատուականաց, այլ քարիւ և վիմով հաւատոյ իւրոյ արտափայլեալ առաւել քան զոսկի և զտպագիտն: Վասն զի գագաթն զարդարեալ և պսակ երկոտասան քարանցն, որք իցեն առաքեալքն, Պետրոս ամենասուրբ զոլով իցէ քահանայապետ Քրիստոսի:

Պատմուճան քահանային իցէ ըստ պողիբրիտին Ահարովնի, որ մինչեւ յոտան իցէ հանդերձ պատուական, և իցէ հրատեսակ, ըստ Մարգարէին որ ասէ. Ո՛ արար զհրեշտակս իւր հոգի և զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: Եւ դարձեալ. Ո՞վ իցէ սա որ եկեսցէ յՆդովմէ. վասն զի Եդոմ

Թարգմանի ընտրեալ կարմիր: Եւ դարձեալ ասէ թէ կարմիր են ձորձը նորա ի բոսորայ. ընդէ՞ր են կարմիր ձորձը քո, և հանդերձը քո որպէս հնձանահարի. և յայտնելով զներկեալ հանդերձն Քրիստոսի արեամբ յանարատ խաչին: Եւ դարձեալ զի կարմիր քղամիղ զգեցաւ ի չարչարանս Քրիստոս, յայտնելով զքահանայս թէ ո՞յր քահանայապետի իցեն պաշտօնեայք: Իսկ առանց գօտւոյ գնալն՝ ցուցանէ՞ զի և Քրիստոսի ի խաչին գնալով առանց գօտւոյ՝ բարձեալ էր գտւոյր խաչն:

Ի վերին պայծառութիւնսն յիմանալի երկնային պաշտօնէիցն և քահանայապետիցն իցեն երիցունք քսան և չորս և սարկաւագունք եօթն. և երիցունքն իցեն ըստ նմանութեան սրովրէական զօրութեանցն, հանդերձիւք իբրեւ թեւովք զաստուածային և զիմանալի կայծակն զՔրիստոս ի մատուցարանն ունելեօք ձեռաց յայտնապէս բերիցեն:

Իսկ սարկաւագունքն յօրինակ հրեշտակական զօրութեանց, անօսւրագոյն կտաւեղէն թեւօք, իբր պաշտօնական հօգի ի սպասաւորութիւն առաքեալք ընթանան: Փոկք ստիխարին որ ի ձեռինն՝ իցեն օրինակ կապանացն Քրիստոսի. վասն զի կապեալ զնա՝ ամին առ կայիափա և Պիղատոս. և փոկք ստիխարին որ ի կողմանս՝ օրինակեն զարիւնն որ հեղաւ ի կողից Քրիստոսի:

Սպիտրաշիւն իցէ փակեղն՝ որով կապեալ ի քահանայապետէն և քարշէր յառաջ:

Եմիփորոնն իցէ ըստ պատմութեանն Ահարոնի. զոր զգնուին քահանայք օրինացն, վարչամակս երկայնս ի վերայ ասեկի ուսոցն զնելով:

Հաց յառաջադրութեանն իցէ առատ քաղցրութեանն Աստուծոյ. զի որդի մարդոյ եղեւ և զինքն եղ առաջի զոհ և պատարագ զմարմինն իւր, և փոխանակ փրկանս և քաւութիւն յաղագս աշխարհի կենաց. վերընկալեալ զբոլոր զանկուածս մարդկային բնութեանս՝ բաց ի մեղաց, և մատուցեալ որպէս առաջնապտուղ և կատարեալ ողջակէզ Աստուծոյ և Հօր՝ յաղագս մարդկային ազգին. որպէս ասէ թէ Ես եմ հացն կենաց որ յերկնից իջեալ, և որ կերիցէ զայս՝ կեցցէ յաւիտեան: Յաղագս որոյ և ասէ մարգարէն Երեմիաս. Եկայք արկցուք (փայտ) ի հաց նորա, ցուցանելով զփայտ խաչին ի մարմինն հարեալ:

Եւ տիգաւ մաքրեալն՝ յայտ առնէ թէ որպէս զոչխար ի զենուսն ամաւ, և որպէս զառն անչար՝ առաջի կտրչի իւրոյ անձայն: Իսկ զինին իցէ արիւն որ ել ի կողիցն նորա. որպէս Մարգարէն ասէ թէ Հաց տացի նմա, և ջուր նորա հաւատարիմ. քանզի փոխանակ գեղարզին որ խոցեաց զՔրիստոս ի խաչին, զի տէգն իցէ գեղարզն. հացն և

բաժակն ստուգապէս և ճշմարիտ՝ իցէ ըստ նմանութեան խորհրդական ընթրեացն, զոր առեալ Քրիստոս հաց և զինի սաէ. Առէք կերայք և արբէք ամենեքեան, այս է իմ արիւն և մարմին, ցուցանելով թէ հազորդս զմեզ արար մահուան և յարութեան իւրոյ և փառաց:

Փոխաձայնք աստուածային պատարագին իցեն մարգարէիցն նախասացութիւնքն, նախ պատմելով զգալուստ Որդւոյն Աստուծոյ զոր ի կուսէն ի վերայ երկրի, գոչելով՝ Աստուած մեր յերկրի երեւեցաւ, և զվայելչութիւն զգեցաւ, այսինքն է զմարմնաւորութիւնն յայտ առնելով. զոր և մեր ընկալեալք և ուսեալք ի ձեռն որոց ականատեսք և սպասաւորք եղեն նորա՝ առաքելոցն, ասեմք. Ո՛ր միածին որդի և բան Աստուծոյ անմահ զոլով. և զոր ի կարգին:

Մուտ աւետարանին, յայտ առնէ զգալուստն և զմուսն Որդւոյն Աստուծոյ յաշխարհիս յայսմիկ. որպէս սաէ Առաքեալ թէ Յորժամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ՝ երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք նորա: Եւ յետ այնմ ցուցանէ քահանայապետն ի ձեռն հանդերձին իւրոյ զմարմնոյն Քրիստոսի զհանդերձն, կարմիր և արիւնատեսակ, զոր զգեցաւ, որ էր աննիւթ և Աստուած, իբր ծիրանի ներկեալ յանարատ արեան յաստուածամօր կուսին. և վերընկալաւ զմոլորեալ ոչխարն ի վերայ ուսոց, զառաջին մորթն ազամային զանգուածոյն, հովիւն քաջ որ հովուէր զխրայէլ զաւազանաւ խաչի իւրոյ. ի խանձարուրս պատեալ և եղեալ ոչ այնուհետեւ ի մտւր անբանից, այլ ի սեղան բանաւոր մարդկան բանաւորաց, զոր օրհնեցին հրեշտակաց զինուորութիւնքն ասելով. Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն. և ամենայն երկիր երկիրպագցեն նմա. և ամենեցուն լսելով, Եկաք երկիրպագցուք և անկցուք նմա: Կեցո զմեզ որդի Աստուծոյ. և քարոզեմք զգալուստն նորա զոր յայտնեցաւ մեզ շնորհօքն Աստուծոյ:

Երեքսրբեան օրհնութիւնն, զոր անդ հրեշտակքն ասացին փառք ի բարձունս, աստ մեր իբրեւ զմոզան ընծայս մատուցանեմք Քրիստոսի, հաւատ սէր և յոյս, որպէս զոսկի, կնդրուկ և զմուս՝ զանմարմնոցն զերզան գոչելովք հաւատարար, սուրբ Աստուած, որ է Հայր, սուրբ հօր՝ Որդի և Բան, վասն զի զոր ընդդէմ մեր զհօր բանասարկուն՝ կապեալ խափանեաց խաչիւն, զայն՝ որ զիշխանութիւն մահուն ունէր՝ և զիշխանութիւն ետ մեզ կոխել ի վերայ նորա: Սուրբ անմահ, Հոգի սուրբ կենդանարար, որով ամենայն ստեղծուածք կենդանասցին. և մնայ և գոչեսցէ Ողորմեա մեզ:

Եւ անհն յաթոռն քահանայապետին և տեառնագրել զժողովուրդն՝

յայտ առնէ թէ մինչ հանդերձեալ էր Որդին Աստուծոյ շնու-
րէնութիւնն իւր որ ըստ մարմնոյ յաղագս մեր, ասելով նոցա Ձխաղա-
ղութիւն իմ թողում ձեզ, ցուցանելով թէ և զխաղաղութիւնն և զօր-
հնութիւնն զայն ետ աշխարհի Քրիստոս՝ ի ձեռն իւրոց առաքելոցն:

Իսկ նստելն իցէ զի Որդին Աստուծոյ զմարմինն զգեցաւ. և զոչխարն
զոր առ ի վերայ ուսոց, զոր և նշանակէ եմիփորոնն՝ որ իցէ աղամային
զանգուածն, վեր եհան զնա քան զամենայն իշխանութիւնս և զտէրու-
թիւնս և զվերին զօրութիւնս, և մատոյց Աստուծոյ և Հօր: Եւ քանզի
մինն աստուածացոյց և միւսն աստուածացաւ, այսինքն մինն զոր էառ
որ ի ձեռն իշխանութեան մատուցողին և վասն մաքրութեան մատու-
ցելոյն, ընկալաւ Աստուած և Հայր, իբրեւ պատարագ ամբիժ յաղագս
մարդկային ազգիս, առ որ և Ասաց տէր ցտէր իմ, այսինքն Հայր ցՈր-
դին, նիստ ընդ աջմէ իմմէ յաթոռ մեծութեան ի բարձունս: Սա է
Յիսուս Նազորացին՝ քահանայապետ հանդերձելոց բարեացն:

Մեսեղին դարձեալ իցէ մարգարէից յառաջասացութիւնքն, որք նախ
գուշակէին զգալուստ թագաւորին Քրիստոսի, իբրեւ զօրականք նախըն-
թանալով և զոչելով. Որ նստիս ի քրովբէս՝ յայտնեաց և եկ ի կեցու-
ցանել զմեզ, և Աստուած նստաւ յաթոռ սուրբ իւր:

Առաքեալն և աղանատեսն և սպասաւորն Քրիստոսի գոչէ քարո-
զելով զարքայութիւնն Աստուծոյ ասելով. Քրիստոս եկն քահանայապետ
հանդերձելոց բարեացն, զոր ունիմք քահանայապետ մեծ ի վեր անցեալ
քան զերկինս. պինդ կալցուք զխոստովանութիւն նորա. ընդ որում
գոչէ և Յովհաննէս Մկրտիչն. Որ զկնի իմ գալոց է՝ նա իցէ գառն Աս-
տուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի. նա սրբեսցէ զձեզ Հոգւով սրբով
և հրով, և ի միջի ձերում կայ:

Ալէլուիա գոչէ Դաւիթ և ասէ. Աստուած մեր յայտնապէս եկեսցէ
և հուր առաջի նորա զնասցէ. երեւեցան փայլատակունք նորա աւետա-
բանչացն տիեզերաց. վասն զի յերբայեցի լեզուն ալ՝ ասէ թէ գայ
յայտնեսցի, և էլ՝ Աստուած, և ոչիս՝ օրհնեցէք զովեցէք զկենդանին
Աստուած:

Իսկ բուրվառն ցուցանէ զմարդկութիւնն Քրիստոսի, և հուրն զաս-
տուածութիւնն, իսկ անուշահոտ ծուխն զբուրումն Հոգւոյն սրբոյ. քանզի
բուրվառն թարգմանի անուշահոտ ուրախութիւն:

Աւետարանն իցէ գալուստ Որդոյն Աստուծոյ, որով երեւեցաւ մեզ,
ոչ ի ձեռն ամպոց և օրինակաց խօսելով, որպէս երբեմն Մովսիսի՝
ձայնիւր և փայլատակմամբք, և հնչմամբք փողոյ, և մառախղով և

հրով ի վերայ լերինն. կամ որպէս կանխաւ մարգարէիցն ի ձեռն երազոց: Այլ յայտնապէս իբրեւ մարդ ճշմարիտ յայտնեալ երեւեցաւ մեզ, որ էր հեզ և հանդարտ թագաւոր, որ նախ իջեալ որպէս զանձրեւ ի վերայ գեղման, և տեսաք զփառս նորա, փառս իբրեւ միածնի ի Հօրէ՛ լի շնորհօք և ճշմարտութեամբ. որով խօսեցաւ ընդ մեզ Աստուած և Հայր, բերան ընդ բերան և ոչ օրինակօք: Վասն որոյ և Հայր որպէս մարդոյ վկայէ և ասէ. Գա է որդի իմ սիրեցեալ, իմաստութիւն և բան և զօրութիւն, որ ի մարգարէսն իմն նախ քարոզեալ և ի ձեռն աւետարանին յայտնեցաւ մեզ. զի որք ընկալցին զնա և հաւատասցեն յանուն նորա՝ առցեն իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել. զոր լուաք և տեսաք աչօք մերովք, զիմաստութիւն և զբանն Աստուծոյ, նմա ամենեքեան զոչչեմք. Փառք քեզ Տէր. և դարձեալ Հոգին սուրբ զոչէ, որ ամպով լուսով հովանաւորէր, այժմ ի ձեռն մարդոյ, զգոյշ լերուք, դմա լուարուք:

Աւետարանք իցեն չորրորդք, վասն զի չորեսեան հոգիք իցեն ընդ հանրականք, ըստ քառակերպեան կենդանեացն, յորս նստի ամենայնի Աստուածն. որոց յայտ առնէ թէ որ նստի ի քրովքէս Աստուած և ըմբռնէ զամենայն՝ յայտնեալ ետ մեզ քառակերպս զաւետարանն, միով հոգևով ըմբռնեալ. քանզի չորրորդ դէմս իցեն և օրինակեն երեսք նոցա զնմանութիւն Որդւոյն Աստուծոյ. վասն զի դէմք որ նման է առիւծոյ՝ ցուցանէ զիշխանականն նորա և զթագաւորականն: Իսկ երկրորդն ի նմանութիւն որթոյ՝ զքահանայագործականն և զքահանայապետական կարգն յայտնէ: Եւ երրորդն որ ի տեսակ մարդոյ՝ զմարդկեղէն նորա զգալուստն յայտնապէս դրոշմէ: Իսկ չորրորդն՝ որ նման է արծուի թռուցելոյ, զՀոգւոյն սրբոյ զաւաւանեալ տուրան ցուցանէ: Եւ աւետարանքն՝ սոցա կերպարանակիցք իցեն՝ յորս նստի Քրիստոս: Վասն զի ըստ Յովհաննու աւետարանն՝ զոր ի Հօրէ իշխանական նորա և զհայրական և զփառաւոր ծնունդն նորա պատմէ. Իսկ զբանէ էր Բանն: Իսկ որ ըստ Ղուկասու՝ քահանայական նկարագիր զուով, ի Չաքարիայէ որ խնդրէր սկիզբն առնէ: Եւ Մատթէոս զմարդկեղէն ծնունդն նորա պատմէ. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի. մարդակերպ իցէ աւետարանս այս: Իսկ Մարկոս՝ ի մարգարէական հոգւոյն, որ ի բարձանց եկեալ մարդկութեանս՝ սկիզբն արար ասելով. Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի, որպէս գրեալ է ի մարգարէսն՝ Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ. զթեւախմբական պատկեր աւետարանին ի ձեռն այսու յայտ առնէ:

Տեառնագրել քահանայապետին զժողովուրդն՝ ցուցանէ զհանդերձեալ զալուստն որ ի վեց հազար և ի հինգ հարիւր ամին հանդերձեալ էր լինել ի ձեռն հաշուոյ մատանցն ցուցանէ:

Երեսայքն արտաքոյ ելցեն որպէս անուամունք աստուածային մկրտութեանն և Քրիստոսի խորհրդոցն: Յաղագս որոց ասէ Տէր, թէ Եւայլ ոչխարք իցեն ինձ, և զնոսա պարտ է ինձ ածել, ձայնի իմում լուիցեն:

Նախադրութիւնն՝ որ լինի յանօթապահան, յայտ առնէ զգազաթան տեղին՝ յորում խաչեցաւ Քրիստոս: Իսկ յառաջ օրինակեցաւ զգազաթան տեղիս այս յԱբրահամէ, յորժամ ի միոյ ի լեւրանցն յայնցանէ հրամանաւ Աստուծոյ զգէն արեանն արար, և զիզեաց զփայտան և եզ զորդին, և մատոյց զխոյն փոխանակ նորա յողջակէզս: Նա ինքն Աստուած և Հայր, որ էր անսկիզբն և հինաւուրց. անսկիզբն իւր Որդին ի վախճան ժամանակացն մարմնանայ յանարատ Աստուածածնէն, յերանացն Աբրահամու, ըստ խոստմանց երդմանն զոր եզ ընդ նմա, որպէս զի և յաղագս ազգի մարդկան ոչ խնայեաց յՈրդին իւր սիրելին և միածին, այլ յաղագս մեր ամենեցուն ետ զնա, և չարչարեցաւ իմն իբրեւ զմարդ մարմնով, այլ մնաց անչարչարելի աստուածութեամբ. քանզի Քրիստոս գնալով ի խաչն իւր՝ զխաչն իւր բառնայր, և փոխանակ խոյին զոհեցաւ մարմինն իւր ամբիծ, իբրեւ զգառն զենեալ տիգաւ ի կողս իւր, և քահանայապետ եղեալ իբրեւ զորդի մարդոյ և մատեալ և մատուցեալ զինքն առ ի քաւել զմեղս բազմաց, և մահացաւ իմն իբրեւ զմարդ, այլ որպէս զԱստուած փառօք զոր ունէր յառաջ քան զլինելն աշխարհի առ ի յԱստուած և ի ծնողէ:

Քերովբէական երգն յայտ առնէ ի ձեռն սարկաւազաց նախաճանապարհ առնելոյն, և ի ձեռն քշոցացն, և սրովբէական պատկերացն տպաւորութեանն՝ զմուտ ամենայն սրբոցն և զարդարոցն, զմտեալան ընդ սրբոյն ամենայն սրբոցն, ընդ մտելոց և առաջի գնալոցն քերովբէական զօրութեանցն, անմարմին պարունակացն և աննիւթոցն առաջի ընթանալով, օրհնելով և շրջապատելով զմեծ թագաւորն Քրիստոս: Նախընթանալով ի խորհրդական պատարագն որ ի ձեռաց նիւթականացն բարձեալ է, ընդ որոց և Հոգին սուրբ գնացէ առաջի յանարին և պաշտօնական պատարագն, իմանալապէս տեսանելով հրով և ինկով և ծխով անուշահոտիւ. հոտ իմն ցուցանելով զաստուածութիւն, իսկ ծուխն անուշահոտ՝ զգալուստ նորա որ եկն աներեւութաբար և անուշահոտեաց զմեզ ի ձեռն խորհրդական և կենդանի զոհին և անարին

պաշտօնին և ողջակիզին, զոր ի ձեռն խաչին և մահուանն Քրիստոսի կատարեալ զանօրէնութիւնն իւր: Այնուհետեւ ապա և զոր ընդդէմ մահուն զյաղթութիւնն, և զոր ի դժոխս զիջումն և զվերելութիւն նորա և զյարութիւն երեքօրեայ, տեսեալ իմանալի զօրութիւնքն և դասակարգութիւնք հրեշտակացն, ընդ մեզ աներեւութարար գոչեն՝ Ալէլուիա: Իցէ և ըստ նմանութեան թաղմանն Յիսուսի՝ մինչ Յովսէփ ի ջուցեալ ի խաչէն զմարմինն՝ պատեաց մաքուր կտաւով և բուրմամբ անուշիւ օժ զնա, բարձեալ հանդերձ Նիկողիմոսիւ, և եղ զնա ի նոր գերեզմանի տաշեալ ի վիմէ, որ իցէ տիպ սուրբ գերեզմանին այնմիկ՝ մատուցարանն, ըստ դրութեան յորում եղաւ սուրբ և անարատ մարմինն սուրբ սեղանն:

Մաղզմայն իցէ փոխանակ ձեռացն Յովսէփու և Նիկողիմոսի՝ որք պատեցին զՔրիստոս. վասն զի թարգմանի յորում Քրիստոս բերի, ըզբոլորութիւն երկնի նշանակելով, ի փոքր պարագրութիւն զիմանալի արեգակն զՔրիստոս բովանդակելով ի հաց տեսաւորեալ:

Սկին իցէ փոխանակ անօթոյն՝ որ ընկալաւ զարիւնն որ հեղաւ ի սուրբ կողէն Քրիստոսի:

Սկին դարձեալ իցէ խառնելին, զոր զրեաց Տէրն որ է իմաստութիւն և Որդի Աստուծոյ, խառնեաց զարիւն իւր փոխանակ զինւոյ, և եղ ի սեղան իւր սուրբ, ասելով ամենեցուն. Արբէք ամենեքեան զարիւն իմ փոխանակ զինւոյ՝ խառնելոյ ձեզ ի թողութիւն մեղաց և ի կեանս յաւիտենական:

Մաղզմային ծածկոյթն իցէ փոխանակ վարշամակին՝ որ էր ի վերայ երեսացն Քրիստոսի, ծածկելով զնա ի գերեզմանին:

Իսկ վարագոյրն զոր ասեմք անափորա, իցէ փոխանակ վիմին՝ զոր փակեաց զգերեզմանն Յովսէփ, զոր և կնքեցին զօրականքն Պիղատոսի:

Ահաւասիկ խաչեցաւ Քրիստոս, թաղեցաւ կեանքն, փակեցաւ գերեզմանն, կնքեցաւ վէմն մատանեաւ քահանայիցն. գայցէ ընդ հրեշտակական զօրութեանցն, ոչ եւս որպէս յերկրաւոր տեղւոջ կալով, այլ որպէս յերկնաւոր մատուցարանի, առաջի ահաւոր աթոռոց կալով. տեսանէ զմեծ և զանքննելի և զանհետազօտելի Քրիստոսի խորհուրդն, խոստովանի զշնորհն, քարոզէ զյարութիւնն, կնքէ զհաւատ սուրբ Երրորդութեան. մատչի սպիտակագետեալ հրեշտակն՝ զվէմ գերեզմանին թաւալել. ձեռամբ ցուցանէ ձեռովն՝ գոչելով ձայնիւ թողութեամբ. ի ձեռն սարկաւազի քարոզելով գերեքօրեայ յարութիւնն, բարձրացուցանելով զվարագոյրն՝ ձայնէ սարկաւազն ասելով. Կացցուք բարւոք, կացցուք

երկիւղիւ, աւասիկ օր առաջին ուղիղ նայեսցուք ի վերաբերութիւնս, ահաւասիկ օր երկրորդ. խաղաղութեամբ մատուցուք, ահաւասիկ օր երրորդ: Ժողովուրդն գոչէ զյարութիւն Քրիստոսի, զշնորհն, ողորմութիւն, խաղաղութիւն և պատարագ օրհնութեան. և քահանայն ուսուցանէ զժողովուրդն զոր ի ձեռն շնորհացն Քրիստոսի ուսեալ Վերրորդական աստուածածանութիւնն. Շնորհք սրբոյ և համագոյական Երրորդութեանն ընդ ամենեւեան ընդ ձեզ: Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ բում: Ապա քահանայն վեր հանելով զամենեւեան ի վերինն Երուսաղէմն, ի լեռն սուրբ նորա, և գոչէ ի վեր կալցուք զսիրտս մեր: Եւ ամենեւեան վկային ասելով. Ունիմք առ քեզ Տէր: Քահանայն՝ Գոհացարուք զՏեառնէ:

Վարագոյրն ասի ի ձեռն Առաքելոյն որ ասէ. Ունիմք համարձակութիւն ի մուսս սրբութեան արեամբն Յիսուսի Քրիստոսի. զոր նորոգեաց մեզ ճանապարհ նոր և կենդանի ի ձեռն վարագուրին, այսինքն է մարմնոյն իւրոյ, և քահանայ մեծ ի տան Աստուծոյ: Ապա մատչի քահանայն համարձակութեամբ յաթոռ շնորհացն Աստուծոյ, հանդերձ ճշմարիտ սրտիւ ի լրումն հաւատոյ, պատմելով Աստուծոյ և խօսելով ընդ նմա, ոչ եւս ի ձեռն ամպոյ՝ որպէս երբեմն Մովսիսի ի խորանին վկայութեան, այլ բաց երեսօք զփառս Տեառն տեսանելով. և յիշէ զսուրբ Երրորդութեանն զաստուածգիտութիւն և զհաւատն, և միայն ընդ միայնոյ խօսեացի Աստուծոյ, խորհուրդս պատմելով խորհրդապէս զծածկեալսն նախ քան զյաւիտեանս և յազգաց. իսկ այժմ յայտնեալ մեզ ի ձեռն երեւման Որդոյն Աստուծոյ, զորս մեզ պատմեաց միածին Որդին որ էրն ի ծոց Հօր. քանզի որպէս խօսեցաւ Աստուած ընդ Մովսիսի աներեւութարար, և Մովսէս ընդ Աստուծոյ, նոյնպէս և քահանայն ի մէջ երկուց քերովբէիցն ի քաւարանին. և հայելով զանրաւելի և զանտեսանելի աստուծութեանն փառսն և պայծառութիւնն՝ զերկնաւոր պաշտօնն իմանալապէս տեսանէ, և ուսանի և զկենդանասկիզբն Երրորդութեանն և զգերագանցիկ զաստուածային ծագումնն զԱստուծոյ, և զՀաւր զանսկիզբն և զանծնունդն, իսկ զՈրդոյ և զԲանին զանսկզբնակիցն և զհամագոյ և զծնելութիւնն. զՀոգւոյն սրբոյ զմշտընջենակցութիւնն զհամագոյութիւնն և զելողութիւնն. Երրորդութիւն սուրբ բատ էութեան, այսինքն է բատ զիմաց. անշփոթելի, անորոշելի. իսկ բատ բնութեան միաւորութեանն՝ անբաժանելի և անմեկնելի աստուածութիւն և թագաւորութիւն և փառք. և իմանալապէս տեսանէ և գոչէ զսրովբէական զօրութեանցն զերրորդասուրբ փառաբանութիւնն, զքե-

րովբէսն որ ծածկեն և գտնուիմքսն՝ որ աղաղակեն. ընդ որոց գոչէ զվերայաղթական օրհնութիւն: Ապա և ժողովուրդն փոխանակ բրովբէական զօրութեանցն և քառակերպեան, գոչեսցէ Սուրբ սուրբ սուրբ Տէր Սարաւովթ, այսինքն է երեքսրբեան և մի աստուածութեան՝ ովսանայ ի բարձունս, օրհնեալ ես, որ զալոց ես յանուն Տեան:

Իսկ քշոցքն և սարկաւագունքն յայտ առնեն զվեցթեւեան սերովբէսն և զբազմաչեայ բերովբէիցն զՂըջարերութիւնն. վասն զի ըստ երկնաւորաց գերագարդ և իմանալի ճշմարիտ կարգին՝ նոյնպէս և երկրաւորքս նմանեցին. քանզի քառակերպեան կենդանիքն փոխաձայնարար զմիմեանս ընկալեալ գոչեն. զի առաջին կենդանին որ ի նմանութիւն առիւծոյ՝ գոչէ Սուրբ. և երկրորդն՝ որ ի նմանութիւն որթու՝ գոչէ Սուրբ. և երրորդն՝ որ ի նմանութիւն արծուոյ՝ գոչէ Սուրբ. իսկ չորրորդն՝ որ ի նմանութիւնն մարդոյ՝ գոչէ Տէր Սարաւովթ. երրորդ սրբարանութեամբն ի մի իմասցին ի տէրութիւն և ի զօրութիւն, զոր օրինակ Եսայիաս մարգարէն ետես. վասն զի ետես զՏէրն ի վերայ աթոռոյ բարձրացելոյ և վերացելոյ և գտնուիմքսն զօրութիւնն շուրջ կալով, և ի ձայնէն լցաւ տունն ծխով:

Իսկ որ առաքեցաւ սերովբէսն և ընկալեալ զկայծակն ի ձեռինն զոր ունելեօք ընկալաւ ի մատուցարանէն, նշանակէ զքահանայ որ ընկալեալ է զիմանալի կայծակն զՔրիստոս ունելեօք ի ձեռաց իւրոց ի սուրբ զինարանէն, և սրբէ և մաքրէ զորս ընդունին և հաղորդին ի նմանէ. վասն զի յերկնաւոր և յանձեռագործ սրբութիւնն եմուտ Քրիստոս, և յայտնեցաւ փառօք երեսաց Աստուծոյ և Հօր, յաղագս մեր եղեալ քահանայապետ մեծ ի վեր անցեալ քան զերկինս, և ունիմք զնա միութարիչ առ Հայր և քաւութիւն յաղագս մեղաց մերոց. որ և հաստատեաց ի մեզ զսուրբ և զմշտնջենաւոր իւր մարմինն, փրկանս յաղագս ամենեցուն մեր, որպէս և ինքն ասէ. Հայր, սուրբ արա զնոսա ի ճշմարտութեան քում և յանուն քո, զոր ետուր ինձ, որպէս զի իցեն և նոքա սրբեալք ճշմարտութեամբ, և կամիմ զի իցեն՝ ուր և ես իցեմ, և տեսցեն զփառս իմ. զի սիրեցեր զնոսա, որպէս և սիրեցեր զիս, յառաջ քան զլինելն աշխարհի:

Եւ դարձեալ քահանայն պատմէ Աստուծոյ և Հօր զՔրիստոսի մարդեղութեանս խորհուրդս, զոր ի սրբուհւոյ կուսէն և յԱստուածածնէն զանճառելի և զփառաւոր ծնունդն, զքաղաքավարիւն և զՂըջիւն յաշխարհի, զխաչն և զմահն և զիջանելն ի դժոխս, և զկապեալ հոգոցն ի ձեռն նորա ազատութիւն, զոր ի մեռելոց երեքօրեայ սուրբ յարու-

թիւնն, յերկինս զհամբարձումնն, զոր ընդ աջմէ Հօր զնստելն, զերկրորդ և զհանդերձեալ զալուստ դարձեալ առ մեզ, և զխորհուրդ ածէ՝ Աստուած է, Աստուած ծնունդ, այսինքն է Աստուած և Հայր, արգանդ՝ յառաջ քան զարուսեակ և նախ քան զյաւիտեանս՝ զԱստուած ծնեալ. որպէս ասէ. Յառաջ քան զարուսեակ յարգանդէ ծնայ զքեզ. զոր և աղաչէ դարձեալ զկատարեալ խորհուրդն Որդւոյ իւրոյ և ծնանել. այսինքն է զփոխարկել զհացն և զգինին ի մարմին և յարին իւր ի Քրիստոսի և յԱստուծոյ. և կատարեսցի զոր ասաց թէ Ես այսօր ծնայ զքեզ. Ուստի և Հոգի սուրբ՝ հաճութեամբ Հօր և խորհրդով Որդւոյ՝ աներեւութաբար մերձ գոլով՝ ցուցանէ զներգործութիւնն զաստուածային, և ձեռամբ քահանային վկայէ և տեսնագրէ և կատարէ զառաջի եղեալ սրբութիւնն ի մարմին և յարին Տեսն Յիսուսի և Փրկչին մերոյ, որ ասէ թէ Յազագս նոցա ես սուրբ արարից զանձն իմ, որպէս զի իցեն և նոքա սրբեցեալք, զի որ կերիցէ զմարմին իմ և արբցէ զարին իմ՝ յիս մնացէ և ես ի նմա. Ուստի եղեալք աստուածային խորհրդոցն ակա՛նատեսք և հաղորդք կենացն յաւիտենից, և կցորդք աստուածային բնութեան, փառաւորեսցուք զմեծ և զանհասանելի և զանհետազօտելի խորհուրդ տնօրէնութեան Որդւոյն Աստուծոյ. Ուստի և փառաւորելով զոչեմք. Զքեզ օրհնեմք զԱստուածդ և զՀայրդ, զքեզ փառաւորեմք Որդի և Բան, զքէն զոհանամք զՀոգւոյդ սրբոյ, Տէր Աստուած մեր. Վասն զի Երրորդութիւն ի միութեան, և միութիւն յԵրրորդութեան, համագոյական և անբաժանելի, զարմանալի ունելով և զբաժանումն դիմացն, և զմիաւորութիւնն ի մի բնութեան և զաստուածութեան. Վասն զի ի խոնարհ առնելն քահանային զաստուածային խորհրդածութիւնն, յայտ առնէ զխօսակցելն աներեւելապէս ընդ անտեսանելոյն Աստուծոյ. ուստի և զաստուածային լուսափայլութիւնն տեսանել, և պայծառութեամբ փառաց երեսաց Որդւոյն Աստուծոյ հրաշացեալ՝ խոնարհեցուցանէ զինքն ահիւ և պատկառանօք. և որպէս Մովսէս մինչ ետես զԱստուած ի տեսակ հրոյ ի լերինն ի դողման եղեալ թաքոյց զերեսս իւր ծածկեալ և յետս դարձեալ, վասն զի պատկառէր հայել ի փառս երեսացն Աստուծոյ:

Լիցի իմն և յիշատակ ննջեցելոցն առ Աստուածն հոգւոց և ամենայն մարմնոց, որ կենդանեաց և մեռելոց իշխանութիւն ունի, և տիրէ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. և որպէս թագաւորին մեր Քրիստոսի՝ մերձ գոլ. և սրբոյ Հոգւոյն կոչելով զկենդանիս և զփոխադրեալն յաստեացս ատանձին օթեկանսն և ի հան-

զըստեան, ի Տեառն մերոյ և Սատուծոյ զալուստն համահաւարեալ և ժամանեալ առաջի երեսաց նորա. իբրեւ ամենայն կապեալ հոգւոցն որոց ի դժոխս՝ լուծելոցն ի ձեռն յարութեանն Քրիստոսի: Վասն զի նա յարեալ ի մեռելոց, առաջնապատուղ և անդրանիկ ննջեցելոցն լինելով, և ամենեցուն ճանապարհ արարեալ զի մեռելոց յարութիւնն և առ անմահ և երանելի ճանապարհորդեալ, զոր յուսով յարութեան նորա ննջեցին. և կոչեսցին ընդ մարգարէիցն և առաքելոցն և մարտիրոսացն և քահանայապետիցն՝ հոգիք քրիստոնէից նմանել, և բազմել ընդ Աբրահամ և Սահակայ և Յակոբայ ի խորհրդական սեղանոյն արքայութեանն Քրիստոսի: Ուստի ի միաբանութիւն հաւատոյ և հաղորդութեան Հոգւոյն սրբոյ եկեալք՝ ի ձեռն տնօրէնութեանն, այնմ որ յաղագս մեր մահացաւ և յարեաւ և նստաւ ընդ աջմէ Հօր, ոչ այնուհետեւ յերկրի եմք, այլ յաթոռ Աստուծոյ արքայականի մերձ կալովք յերկինս՝ ուր Քրիստոս իցէ. որպէս ասէ թէ Հայր արդար, սրբեա զնոսա յանուն քո, զի ուր եան իցեմ և նոքա ընդ իս իցեն, և տեսցեն զփառսն զոր ետուր ինձ, զի սիրեցեր զնոսա որպէս զիս: Ուստի և զորդեգրութիւն ընկալեալք և ժառանգակիցք Քրիստոսի եղեալք ի ձեռն շնորհաց նորա և ոչ ի գործոց՝ ունիմք զՀոգի Որդւոյն Աստուծոյ ի սիրտս մեր. զորոյ զնեղործութիւնն և զշնորհն քահանայն տեսանելով գոչէ և ասէ. Աբրահայր մեր երկնաւոր, արժանացո զմեզ անդատապարտ հանդերձ համարձակութեամբ իշխել կարդալ զքեզ և ասել: Ժողովուրդն՝ Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո: Անուն իցէ Որդւոյն Աստուծոյ կոչեսցեալն ի վերայ մեր. վասն զի Քրիստոս՝ և մեք քրիստոնեայք, և անուն նորա կոչեսցի առ մեզ: Եկեսցէ արքայութիւն քո. արքայութիւնն Աստուծոյ՝ Հոգին սուրբ իցէ, որպէս ասէ թէ Արքայութիւնն ի ներքս ի ձեզ է. քանզի Հոգւովն սրբով, հանդերձ Հարբն և Որդւով, որ թագաւոր գոլով իցէ որ սրբէ, որ լուսաւորէ զիմանալի և զհրեշտակական զօրութիւնս, և զամենայն մարդ որ զալոց է յաշխարհս, և հաւատասցէ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. կամք Աստուծոյ և Հօր՝ իցէ տնօրէնութիւն Որդւոյ իւրոյ: Զհաց մեր զհանապազն տուր մեզ այսօր. հաց հանապազ Քրիստոս իցէ, որ էնն, և յառաջ էնն և եկն, որ է անծախելի և միշտ մնացական, և տացէ կեանս աշխարհի, զոր ի ձեռն մկրտութեան ընդունեցաք, զնոյնն առնուլ հանապազ հայցեմք: Եւ թող մեզ զպարտս մեր և զյանցանս: Ապա դարձեալ գոչէ քահանայն և ասէ, թէ Ես մարդ եմ արտակից ձեր, և ոչ զիտեմ զիւրաքանչիւր ոք ի ձէնջ. տեսէք և զգոյշ

լիբուք, ահաւասիկ Քրիստոս և Աստուած իցէ, որ է սուրբ և ի սուրբս հանգուցեալ: Եւ ժողովուրդն խոստովանի և ասէ. Մի սուրբ Տէր Աստուած անմեղ, տէրն մեր Յիսուս Քրիստոս ընդ Աստուծոյ Հօր և Հոգւոյն սրբոյ, նմա փառք յաւիտեանս ամէն: Մովսէս իմն զարինն ցլուց և նոխազաց սրսրկէր ժողովրդեանն ասելով՝ Արինս այս ուխտի Աստուծոյ իցէ. իսկ Քրիստոս Աստուած զիւր մարմինն ետ, և զիւր արինն եհեղ և խառնեաց զնոր ուխտն՝ ասելով. Այս է մարմին իմ և արին, որ բեկաւ սրսրկելով ի քաւութիւն մեղաց, և քանիցս անգամ ուտիցէք զհացն և զբաժակն ըմպիցէք, զմահն իմ և զյարութիւն իմ խոստովանես՛ ձիք :



սուրբս
բ Աս
և Հոգ
ցլոց
ի Աս
սրինն
սրին,
տիցէք
տովա

